

# Սպիտակաձյունիկը և յոթ թզուկները

**3D հեքիաթ**

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
EDIT PRINT
Publishing House

Անգլերենից թարգմանեց Աստղիկ Գյուրջինյան



Կար-չկար, մի հսկա դղյակ կար, որտեղ ուրախ ու երջանիկ մեծանում էր
արքայադուստրը, չնայած որ նախանձ խորթ մայր ուներ: Աղջիկը շատ գեղեցիկ էր,
սիրուն աչուկներ և շքեղ սև մազեր ուներ: Մաշկը նուրբ էր և սպիտակ.
դրա համար էլ նրան Սպիտակաձյունիկ էին անվանում:
Բոլորը վստահ էին, որ երբ նա մեծանա, գեղեցիկ օրիորդ է լինելու:



Չնայած Սպիտակաձյունիկի խորթ մայրը չար կին էր, սակայն նա էլ շատ գեղեցիկ էր, և կախարդական հայելին ամեն օր նրան ասում էր այդ մասին, երբ նա հարցնում էր հայելուն. «Հայելի՛, իմ հայելի՛, ո՞վ է ամենագեղեցիկն աշխարհում»: Պատասխանը միշտ նույնն էր. «Դուք եք, Ձերդ գերազանցություն»: Բայց մի սարսափելի օր հայելին նրան ասաց. «Սպիտակաձյունիկն է ամենագեղեցիկն աշխարհում»: Խորթ մայրը կատաղեց ու նախանձով լցվեց և սկսեց իր հակառակորդից ազատվելու համար ծրագիր կազմել:



Սպիտակաձյունիկը խոհանոցում էր, երբ դռան թակոց լսեց՝ թու՜կ-թու՜կ:
«Ո՞վ է»,- կասկածանքով հարցրեց նա: «Գյուղացի ծեր կին եմ, խնձոր եմ վաճառում»,- լսվեց պատասխանը: «Ինձ խնձոր պետք չէ, շնորհակալ եմ, և ես դուռը որևէ մեկի առաջ չպետք է բացեմ»,- պատասխանեց նա:
«Բայց այնքա՜ն գեղեցիկ և հյութեղ խնձորներ են»,- դրսից ասաց քնքուշ ձայնը:



Արքայազնը գեղեցկուհուն խնդրեց ամուսնանալ իր հետ, և թզուկները ստիպված պետք է հրաժեշտ տային Սպիտակաձյունիկին:



© EDIT PRINT Publishing House, 2011
Illustrations Copyright © 2011 Digikore Studios Limited.

ISBN 978-9939-52-355-2